

2157.

ՅԵ ԳՐԱԴԱՐԱՆԻ „ԱՐԵՒ“


№ 2.

Մ. Ս-Կ.

ՊԱՏՄԱԿԱՆ Էջեր

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՁԵՌԸ ԲԵՐԵՑ
ՖՐԱՆԶԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԵ
— ԻՐ ԱԶԱՅՈՒԹԻՒՆԸ —

թարգ. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ



Տպարան Ն. Երևանցեամի, Բագու:

1917

30 MAY 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

№ 2.

24 JAN 2006

9(44)

Դ-30

ԱԿ

Մ. Ա-կ.

ՊԱՏՄԱԿԱՆ Էջել

1
2
3
4
5
6
7

ՅԵ ԽԵՂԱ ԵԼԵՐԵ
ԳՐԱՆՑԱԿԱՆ ԳՈՂՈՎՐԴԵ
— ԻՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ —

Թարգ. Ա. ՅԱՐՈՒԵԿԻԿԻՆՆ

Տպարան Ն. Երևանի պատմական, Բագու

1917



18 JUL 2013

245X

ԳՐԱԴԱՐԱՆ ՀՅՈՒՍՅԱԿԱՆ
ՏՐԱՆՏԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՆՏԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՆՏԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

4-10-70

ԱՅՋ ՄԱՐԴԱՅՐ

ՏՐԱՆՏԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՆՏԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՆՏԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՆՏԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵս ԶԵՐՈՔ ԲԵՐԵՑ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՃՈՂՈՎՐԴԻՐԴԸ ԻՐ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Երկրագնդիո վրայ գոյութիւն ունին շատ
տարբեր պետութիւններ և ազգեր։ Նրանք տար-
բեր կերպով ապրում են և տարբեր կերպով կա-
ռավարում։ Ոմանք հասարակապետական կառա-
վարչական ձև ունին, ոմանք՝ միապետական
ոմանք պարապում են երկրագործութեամբ, որ-
որ սորդութեամբ և ձկնորսութեամբ, իսկ ոմանք էլ
ապրում են սարերում և երկրի ծոցի խոր հան-
քահորերից հարստութիւններ են հանում։ Եւ
բոլոր աղգերը չունին միակերպ և միահաւասար
ազատութիւն։ ով յաջողել և կարողացել է իրե-
նից ձգել դարեւոր ստրկութիւնը և սահմանել իր
պետութեան մէջ լաւ կառավարութիւն, նա էլ
օգտում է լայն ազատութեամբ, քան ուրիշները։
Նա աւելի հարուստ և աւելի հանգիստ է ապ-
րում, աւելի ազատ է շնչում և աւելի բաղդա-
ւոր զգում իրեն։ Իսկ ում վրայ գեռ ծանրա-
նում են հին ճնշումները, նա իր բոլոր ոյժերը —

գործ է դնում, որպէսզի շուտ ձգէ նրան իրենից և ձեռք բերէ իր ազատութիւնը։ Երկրիս վրայ կան կառավարութիւններ՝ հարուստ ու կրթուած, հզօր իրենց կառավարութեամբ և հըպարտ իրենց ժողովրդի ոյժով։ Բայց կան ժողովուրդներ և պետութիւններ էլ, որոնց համար ծանր է եղել մինչև այժմ ապրելը. շատ բնական արգելքներ և պատահական դժբախտութիւններ վիճակուած է եղել նրանց կրելու. Այդպիսի պետութիւնների ժողովուրդը տղէտ է, կոշտ ու կոպիտ, խաւար և աղքատ։ Աշխատում է շատ—բայց անօգուտ, որովհետեւ հողը մշակում է նահապետական միջոցներով, իսկ ֆարբիկաներ ու գործարաններ երկրում—հազուագիւտ։

Մեր արևմտեան հարեանները՝ ֆրանսիացիք, անգլիացիք, ամերիկացիք և այլն աւելի կրթուած են մեզնից, աւելի հարուստ և աւելի ուժեղ։ Նրանք լաւագոյն պետական կարգեր ու նին սահմանած իրենց երկիրներում. նրանք մեզնից շատ և շատ հեռու են գնացել իրենց կեանքի բարեկեցութեան մէջ։ Բայց նրանք այդ բոլորին միանգամից չեն հասել. երկար, շատ երկար տարիներ պայքար են մղել իրենց ազատութեան համար և շատ արիւն թափել դրա համար։

Զըի ոչինչ չի տրւում—ճակատագիրը ան-

կաշառ գոհեր է պահանջում։

Ահա կարճ խօսքերով էլ մենք կպատմենք թէ ինչպէս ֆրանսիական ժողովուրդը ձեռք բերեց իր ազատութիւնը. Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը, որ փշրեց դարեսոր ստրկութեան շղթաները՝ կատարուել է վաղուց—մօաւորապէս հարիւր երեսուն տարի առաջ։

Շատ հին ժամանակներից ի վեր այստեղ երկիրը կառավարում էին թագաւորները. Կառավարում էին նրանք ինքնիշխան, առանց որևէ վերաստուգութեան ժողովրդի կողմից. Նրանց ամենամօտիկ օգնականներն էին ազնուականները և հոգեքրականները, որոնք անսահման հարստացել էին, իսկ ժողովրդին պահում էին աղքատութեան և տղիտութեան մէջ։ Ֆրանսիական թագաւորները սովորաբար ապրում էին Պարիզում, Վերսալի փառահեղ պալատում, իսկ ժողովրդը կառավարում էին մշտական գօրքի աստիճանաւորների միջոցով։ Զօրքի զլուխը համարւում էր թագաւորը և նա՝ զօրքը զլխովին ենթարկւում էր թագաւորին. Այդ զօրքի պահելու համար պահանջում էր հսկայական միջոցներ, որը ձեռք էր բերւում ժողովրդից զանազան տաւրքերի անուան տակ։

Այն պետական կարգը, որ գոյութիւն ունէր

Ֆրանսիայում Յեղափոխութբանից առաջ, կոչում էր աւատական, իսկ հսկայական կալուածքների տէրերը, հոգեորական թէ աշխարհական՝ կոչում էին աւատներ (Féodal)։ Տիրում էին նրանք թագաւորի հետ միասին պետութեան ամենալաւ հոգերին և ոչ մի հարկ, ոչ մի տուրք չէին վճարում. ապրում էին շքեղ և կեղեքում խեղճ ժողովրդին։ Նրանք թուով շատ քիչ էին, հոլոր ֆրանսիացիք այն ժամանակ 26 միլիոն էին, իսկ հոգեորականութիւնը և ազնուականութիւնը միայն 270 հազար և նրանց էր պատկանում հոգերի մեծ մասը։

Միմիայն թագաւորական կալուածքները համայնական հոգերի հետ միասին կազմում էին $\frac{1}{5}$ -ը, իսկ թագաւորական ընտանիքի կալուածքները՝ $\frac{1}{7}$ մասը ամբողջ ֆրանսիական հոգերի։

Եկեղեցական հոգային հարստութիւնը հըսկայական էր. նրան էր պատկանում ամբողջ ֆրանսիայի հոգերի $\frac{1}{5}$ մասը և այն էլ ամենալաւագոյն, ամենապարզաւէտ և մշակուած մասը։

Եկեղեցական կալուածքները գնահատուում էին 4,000 միլիոն, իսկ նրանցից ստացած տարեկան եկամուտները՝ 123 միլիոն լիվո։

Հոլոր հոգեորականութիւնը բաժանուած էր երկու դասակարգի՝ բարձրագոյն և ստորին։ Բարձրագոյն դասակարգին էին պատկանում՝ արք-

եպիսկոպոսները, եպիսկոպոսները և վանքերի վանահայրերը, իսկ ստորին դասակարգին՝ ծխական քահանաները։ Եկեղեցական բարձրագոյն պաշտօնի նշանտկումն կախուած էր բացառապէս թագաւորից և նա հարուստ, ծուխերը բաժանում էր ազնուականներին։ Ֆրանսիայում այդ ժամանակ 131 եպիսկոպոս կար, որոնք բոլորը միասին ստանում էին տարեկան եկամուտ 14 միլիոն լիվո, որը մեր փողով անում է 3,500,000 ըուրինի իսկ դրանց մէջ զտնուում էին և այնպիսինները, ինչպիսին էր, օրինակ՝ Սարասբուրգի Ռոգան արքեպիսկոպոսը՝ որը տարեկան մի միլիոնից աւելի եկամուտ ունէր։ Նա վերջը ահագին հոչակ ստացաւ նրանով, որ ցանկանալով հրապուրել և արժանանալ թագուհու։ Մարիանուանէտափի գգուանքին, ֆրանսիայի վերջին թագաւորի՝ Լիւդովիկ ԽVI-ի կնոջ՝ ընծայեց նըրան 1,400,000 լիվո արժողութեամբ մի աղամանդեայ մանեակի։

Այն ժամանակ, երբ բարձրաստիճան հոգեորականութիւնը փարթամութեան, փափկասիրութեան անձնատուր եղած՝ վարում էր դասարկապորտ և սանձարձակ ու ցոփի կանք Վերսալի պալատում, բոլոր ծանրութիւնը եկեղեցական ըրինակատարութեանց ընկած էր ստորին կարգի ծխական հոգեորականութեան վրայ։ Այդ հո-

գեղրականութիւնը ապրում էր, ոչ թէ պետական փարթամ պալատներում, այլ աւերուած գիւղերում, կեղեքուած աշխատաւոր գիւղացիութեան շրջաններում և ժամանակն անց էր կացնում, ոչ թէ պարապութեան ու ծուլաթեան մէջ, այլ դաժան աշխատանքի մէջ: Բնականօրէն նա կապուել էր ժողովրդի դառն իրականութեան հետ, որի մէջ գտնւաւմ էր նա, և դիմելով սիրոյ և ողբրմածութեան քարոզով նրան, նա խորապէս զգում էր ժողովրդի թշուառութիւնը և սրտով ցաւում: Ծխական քահանաները իրենք կարիքի ու քաղցի մէջ տանջւում էին: Անունով նրանք թէի հաշւում էին արտօնեալ դասակարգ, բայց իրականապէս նրանց բոլորի փոխադարձ շահերը մօտեցրել էին հասարակ ժողովրդի հետ:

Եւ հէնց ծխական քահանաների ծանր, լըքուած և ընկճուած դրութիւնով պիտի բացատրել այն հանգամանքը, թէ ինչու նրանք յեղափոխութեան վճռական մօմէնտին անցան ժողովրդի կողմը:

Եթէ մենք դառնանք միւս բարձր դասակարգին՝ ազնուականութեան, կընկատենք նոյնպէս, որ կային ականաւոր ազնուականներ, որոնք ձգտում էին դէպի Պարիզ, այն է՝ արքայական ողորմած և առատաձեռն նուէրների հարուստ աղբիւրներին, և կար ոտորին և միշ-

ջին ազնուականութիւն, որը տպրում էր գաւառներում և յաճախ ենթակայ էր մեծ զրկանքների: Շատ ազնուական ընտանիքներ կային, որոնց տարեկան եկամուտը չէր բարձրանում 50 մինչև իսկ 25 լիվակից:

Ապրում էին նրանք իրենց հին աւատական կալուածքներում, պարապում երկրագործութեամբ և քամում աղքատ գիւղացիների վերջին հիւթը: Հարցը պարզ էր— աղքատ գիւղացուց, քայքայուած տուրքերից, որոնք, —ի դէպէ ասել, —մեծ բան չէին կարող ստանալ, որովհետեւ տրքայական անխիղճ պաշտօնեանները ծծել էին խեղճ ժողովրդին: Մնում էր, ուրեմն, կիսաքաղցած վիճակի մէջ ապրել այդպիսի ազնուականներին:

Դիմում էին նրանք թափաւորին յետ ընկած գաւառներից օգնութեան համար, բայց նըրանց շատ քիչ բան էր ընկնում. արգէն գրաւել էին նրանք, որոնք աւելի մօտ էին գտնուում պալատին: Թագաւորական պալատում ապրում էին մինչև 15,000 զանազան աշխարհական և հոգեւորական ազնուականներ:

Պալատական այդ ամբոխի պահպանութեան համար ծախսում էր պետական բոլոր եկամուտների $\frac{1}{10}$ մասը, մօտաւորապէս 40 միլիոն բուրլի մեր փողով: Բացի դրանից, վերջին տասն և

հինգ աարին Յեղափոխութիւնից առաջ միմիայն ընծանէր պետական գանձարանից բաժանուած էր 228 միլիոն լիվո, որից 80 միլիոն բաժին էր ընկել թագաւորական ընտանիքին։ Մի քանի տարի հին կարգերի խորտակումից առաջ, երբ պետական ֆինանսները կատարելապէս քայլացած էին, մինիստր Կոլոննը գնեց թագաւորի և թագուհու համար երկու գեղածիծաղ դղեակներ և վճարեց դրանց համար 29 միլիոն։ Պալինակի ընտանիքը, որին շատ սիրում էր թագուհի Մարիա-Անտուանետտան՝ ստացաւ 700 հազար թոշակ, իսկ մէկ ուրիշը, բացի դրանից, միանուագ ուտացաւ 1,200,000 լիվո կալուածքներ գնելու համար։

Ստորին և միջին ազնուականութիւնը ապրելով պալատից գուրս, զրկուած էր այդ շնորհներից։ Նա զայրանում էր պալատական մեծունիների վրայ պետական գանձարանը կողապտելու համար և պահանջում էր խնայողութիւն ծախսերի մէջ։

Ծանր էր ծխական քահանաննը գրութիւնը Յեղափոխութիւնից առաջ, ծանր էր նոյնպէս անտեսապէս քայլացած ստորին ազնուականութեան համար։ իսկ ժողովրդական մասսաների դրութիւնը ուզգակի զարհութելի էր։

Ճանապարհորդները, որոնք տեսել են ֆրան-

սիական գիւղացիներին Յեղափոխութիւնից առաջ, խօսք չեն գտնում արտայայտելու այդ խեղճերի տառապանքները։ Գիւղացիների վրայ ծանրանում էր հարկերի ու առւրքերի ահազին բեռը։ Ականաւոր և հարուստ մարդիկ՝ հոգեսրականները և ազնուականները հարկեր չեին վճարում, իսկ աղքատները վճարում էին իրենց վերջին կոպէկը։ Մի հեղինակ ասում է. «Ճուրքը անխիզն էր միայն աղքատի վերաբերմամբ և աղքատի վրայ էր ընկնում բարձր դասակարգի հարկերից ազատուելու ծանրութիւնը»։

Գիւղացին վճարում էր հարկ պետական գանձարանին, կրում էր իր ուսերի վրայ աւատական պարտականութիւնները յօգուտ կալուածատիրոջ և բացի դրանից տալիս էր եկամուտից տասանորդ հոգեսրականութեան։

Գրեթէ բացառապէս գիւղացիների վրայ էր ընկած զինւոր տալու պարտականութիւնը։ Ազնուականութիւնը ազատ էր զինւորական պարտականութիւնից և միայն, ըստ իր ցանկութեան՝ կարող էր արդիւնաւոր, բայց ոչ աշխատանք և ոչ զիտութիւն պահանջող պաշտօն ստանալ գործի մէջ։ Թէ որչափ բարձր և առտաձեռն էին վարձատրում այդ պաշտօնները, երեւում է նրանից, որ ծախսը բարձրագոյն զինւորական կազմի համար տարեկան 46 միլիոն լիվոի էր հաս-

նում, իսկ մնացած միւս բոլոր գօրքի համար՝ միմիայն 44 միլիոն։ Երբ ոմանք ասում էին, թէ անարդարութիւն է զինուժական ծառայութեան բոլոր ծանրութիւնը զնել զիւղացիների վրայ, նրանց պատասխանում էին. «Բայց չէ որ, ոչ ոք՝ բացի զիւղացուց անկարող է ապրել այնպիսի գաժան պայմաններում, ինչպիսի պայմաններում գտնուում են զինուորները, և, համբերել այն կոշտ վերաբերմունքներին, որին նրանք ենթակայ են։»

Եւ ահա գալիս է վիճականան վթեան ժամանակը՝ շատերը փախչում են դէպի անտառները, աւելացնելով թափառաշրջիկների, աւազակների և մուրացկանների թիւը։

Բացի զինուորակոչի պարտականութիւններից, զիւղացիք պիտի եւզս քաշէին ճանապարհները կանոնաւոր վիճակի ոչչ պահելու, ուայլեր ալու փոխազբութիւնների համար ու զօրքին իրենց բնակարաններու մտեզաւորելու։ Այս պարտականութիւններն ի կատար ածելու համար թագաւորի պաշտօնեանները ձնշում էին զիւղացիներին ամենայն գաժանութեամբ։ Դրանք զիւղացիների ամենաանգութ թշնամիներն էին։ Հարեկանանները դործազրում էին ամենաաններելի միջոցներ, որպէս զի քամեն խեղճ զիւղացու ամենավերջին հիւթը վերցնում էին նրանից ոչ

այնքան, որքան պիտի լինէր, այլ այնքան, որքան նրանք կարող էին նրանից վերցնել։ Ահա, օրինակ, այն պատկերը, որ նկարագրում է մի ականատես։ Եթէ զիւղացին չի վճարում որպշուած ժամանակի ընթացքում, հարկահանը շրջում է զիւղի ամեն մի անկիւն և հաւաքում է թփերի վրայից չորացնելու համար փոած սպիտակեղէններն անրաւարար է համարում, նաև ուզդուում է դէպի զիւղացու բնակարանը, վերցնում է նրա անկողինը, վերցնում է կարասիները, հանում է զըռների ծղխնիները և մինչև իսկ տան տանիքը, եթէ նա կղմինգրից է, երբեմն մինչև իսկ քանգում են աները, որպէսզի վերցնեն գերանները, տախտակները և այս բոլորը ծախում են չնչին արժէքով։ Եթէ զիւղացին, այդ տարին, օրինակի համար, ճշտութեամբ վճարէր իր հարկերը, հետեւեալ տարին արդէն պիտի աւելացնէին։ Հարկահաններին ձեռնտու չէր, որ զիւղացին լինէր ճշտապահ վճարող։ Այսպիսի հանգամանքներում, — ասացէք, — ովք կաշխատէր իր տնտեսութիւնը բարելաւել։ Հողը չէր պարարտացընւում ու հետեւաբար տալիս էր քիչ բերք — սարսափելի սովոր տարածւում է երկրում։ Ահազին հողի աարածութիւններ, որ առաջ պաղաէտ էին, այժմ մնացել էին անմշակ՝ ծածկուելով թու-

մերով և անպէտք խոտերով, Հեղինակ Կէնէն հաշուել է, որ 1750 թ. 59 տարի Յեղափոխութիւնից առաջ, բոլոր հերկելի հողերի $\frac{1}{4}$ -ը մնացել էր անմշակ: Մի ուրիշ հեղինակ Արտօւր Խնդ ցոյց է տալիս, որ ֆրանսիական բոլոր պէտքական հողերի $\frac{1}{3}$ մասը երեսի վրայ ձգուած էր, Գիւղացիներին անտեսապէս քայլայեցին ոչ միայն ուղղակի հարկերը, որ վերցնում էին նրա կալուածքներից, այլ և այն անուղղակի հարկերը, որ զրուած էր, օրինակի համար՝ աղի, շաքարի, բոլոր խմիչքների, ծխախոտի և այլ ապրանքների վրայ:

Բոլոր այդ հարկերը գրուած էր կապալով. այսինքն հարուստ մարդիկ՝ կապալառուները վըճարում էին պետութեան որոշ գումար ու ստանում բացառապէս դրա համար իրաւունք հարկերը հաւաքելու: Ինքնըստինքեան հասկանալի է, որ նրանք բնակչութիւններից վերցնում էին աւելի շատ, քան իրենք վճարում էին գանձարանին: Կապալառուները կարգադրութիւններ էին անում մրանսիայում այնպէս, ինչպէս մի նոր նուաճու ած երկրում:

Նրանք ամենայն տարի վճարում էին պետութեան 166 միլիոն, իսկ ժողովրդից դուրս էին կորզում, իհարկէ, կրկնակին: Նրանց ագանութիւնը կանգ էր առնում միայն այնտեղ, ուր

արդէն ոչինչ չէր մնացել վերցնելու:

Թագաւորական խորհրդի մի որոշում՝ ընդդէմ մի հոչակաւոր կապալառուի՝ ասում է. «Բուրբոնում կան շատ մարդիկ, որոնք բոլորովին աղ չեն գործածում: Աղքատութիւնը նրանց թոյլ չէ տալիս գնել ոչ միայն ցորեն կամ հաճար, այլ մինչև իսկ վարսակ կերակրուելու համար: Աղքատութիւնը ստիպում էր նրանց կերակրուել խոտով և մինչև իսկ մեռնել քաղցից: Բացի ուղղակի հարկերից և անուղղակի տուրքից, որոնք հաւաքւում էին պետակտն գանձարանի օգտին, գիւցացիք տալիս էին և այլ տուրքեր աւատական կալուածատէրերի օգտին: Յեղափոխութիւնը ոչնչացրեց աւատական մօտ 50 զանազան տուրքեր: Եթէ գիւղացուն, վերջ է վերջոյ, այնուամենայնիւ, յաջողւում էր հաւաքել մի քիչ բան իր մի կտոր հողից, օրինակի համար՝ մի քանի փութ հացահատիկ կամ խաղող, նա այդ անդամ գործադրել իր պէտքերի համար՝ իրաւունք չունէր: Նա պարապուած էր հացահատիկը աղալ կալուածատիրոջ աղօրիքում, իսկ խաղողից գինի ստանալու համար՝ մզել կալուածատիրոջ մամուլով: Դրա համար նա վճարում էր կամ եղած բերքի մի որոշ մասը կամ մի որոշ գումար հնչիւն դրամ: Առաջին ամսուայ ընթացքում գիւղացին իրաւունք չունէր

ծախել իր գինին, որպէս զի մրցում առաջ բերած չըլինի կալուածատիրոջ դէմ։ Գիւղացին իրաւունք չունէր իր փռում հաց թխելու, այլ պարտաւոր էր թխել կալուածատիրոջ փռում և, իհարկէ, ոչ ձրի։ Դժուար է այստեղ մի առ մի թուել այն բոլոր ճնշումները, որ գիւղացին կըրում էր հին կարգերի ժամանակ յօդուտ կալուածատիրոջ, բայց այստեղ անհրաժեշտ է յիշել նոյնպէս մի շատ վրդովեցուցիչ աւատական իրաւունքի, այն է՝ որսորդութեան իրաւունքի ժաման։ Միայն ազնուականները և թագաւորը իրաւունք ունէին որսալ ու պահել—բազմացնել որսեր։ Նրանք մեծ քանակութեամբ պահում էին նապատակներ, կտքաւներ, ճագարներ, աղաւնիներ և այլն։ Մի քանի տեղերում գիւղացիք պարտաւորուած էին մշակել միայն այնախին հացահատիկներ և կանաչեղիններ, որպէսզի մեծ սիրով ուտէին որսերը։

Իշխան Կօնդէի կալուածքում առանձին հոգատարութեամբ պահում և կերակրում էին փոքրիկ գայլեր, իսկ յետոյ՝ ձմեռը բաց էին թողնում ազատ և դրանց վրայ որսի գնում։ Գայլերը փախցնում էին ոչ միայն գիւղացու անասունները, այլ և յաճախ երեխաններին։ Սպանել նրանց կամ հրացան պարպել ամենախիստ կերպով արգելուած էր գիւղացիներին։ Թագա-

ւորական մի առանձին հրաման 1762 թ. արգելում էր գիւղացիներին ցանկապատել իրենց հողերը, որոնք գտնուում էին կից թագաւորական որսորդական շրջաններին, որպէսզի որսը հնարաւորութիւն ունենայ ազատ և հանգիստ արածել—կերակրուել գիւղացիների ցանքսերում։ Մայիսի 1-ից մինչեւ յունիսի 24-ը արգելուած էր գիւղացիներին մինչև անգամ մաս գալ իրենց դաշտերում, որպէսզի անհանգիստ չանէին կագաւուններին ձու ածելու ժամանակ։ Երբ Պարիզում ժողովուրդը ապստամբուեց և յուլիսի 14-ին 1789 թ. քարուքանդ արաւ ատելի Բաստիլ ամրոցը, թագաւորը՝ Լիւդովիկ X-ը իր օրագիր՝ յիշատակարանում արձանագրեց՝ «Զը լինէր որսորդութիւնը», Եթէ այս բոլոր յաղթահարութիւններին և ճնշումներին, որ ենթարկուած էր գիւղացին, աւելացնելու լինենք նոյնպէս եկամուտների մի տասանորդի վճարի անհրաժեշտութիւնը յօդուտ եկեղեցու, հասկանալի կրդառնայ, որ գիւղացու համար մնացել էր միայն մի ելք—փախչել՝ փրկուելու համար։ Փախան դէպի անտառները և դէպի մեծ ձանապարհները, գարձան մուրացկաններ, կազմուեցան աւազակային խմբեր և այլն։ Երկիրը հեղեղուեց քաղցած և կատաղած խմբերով, որոնք թափառում էին ամեն կողմ, երբեմն հառաջե-

լով, երբեմն սպառնալով։ Ամենախիստա պատիժներն ու բանտերն անզօր էին։ Յեղափոխութիւնից մի քանի տարի առաջ մուրացկանների թիւը համառում էր 1,200,000 մարդու։

Շատերը գնում էին քաղաքներն աշխատանք փնտուելու, բայց նրանց յոյսերը իզուր էին անցնում։ Այնտեղ իշխում էր արհեստաւորների կղզիացած կազմակերպութիւն, որի մէջ շատ դժուար էր մտնել, իսկ ազատ զբաղուել արհեստներով արգելուած էր։ Առևտուրը սարսափելի կերպով ճնշուած էր աւատականների, ճանապարհների, կամուրջների և այլ մաքսերով։

Իբրև, օրինակ, կարելի է ցոյց տալ հետեւալը, օրինակ՝ այն գինին, որ տարւում էր մի գաւառից միւսը, օրինակ՝ Օրլիանից՝ Նորմանդիա, չնորհիւ զանազան մաքսային տուրքերի, արժէքը առասպելական բարձրութեան էր հասնում—գինին քսան անդամ թանգանում էր։

Առևտրա-արդիւնաբերական գասակարգը՝ այսպէս ասած՝ բուրժուազիան յամառ կերպով պահանջում էր վերացնել արհեստակցական միութիւնները և սկսել ազատ առևտուր։ Բուրժուազիան գարձել էր աւելի քան յեղափոխական գասակարգ. նրա առաջնակարգ պայքարող փաստաբանները, գիտնականները, գրողները, բժիշկները, ուսուցիչները շատ լաւ հասկանում էին

թէ որտեղ է պահուած չարութեանց արմատները, ով է մեղաւոր ժողովրդական այդ տառապանքների մէջ։ Նրանք պահանջում էին, որ հրաւիրուեն ժողովրդի լիազօրները, պահանջում էին, վերացնել հին աւատական կարգերի ճրնշումներն ու հալածանքները։ Խսկ թագաւորը այդ տառապանքների օրերում քէֆ էր անում պալատում իր պալատականների հետ—ժողովրդի տառապանքի հառաջանքները նրան չէին հասնում։ Պետական գանձարանը կատարելապէս մնանկացել էր —ժողովրդից այլևս ոչինչ չէր մընտցել վերացնելու։ Կնքում էին փոխառութիւններ մէկը միւսի յետելից ծախսերը ծածկելու համար, բայց իւրաքանչիւր տարի դարձեալ 140 միլիոն բաց էր մնում։ Պետութիւնը կանգնած էր սնանկութեան եղբին—և թագաւորը ստիպուած հանրային պահանջի առաջ՝ համաձայնեց հրաւիրել, այսպէս ասած՝ Les états généraux (Ազգային Համագումար)։

Ազգային Համագումարը ծնունդ էր առած մի քանի դար այդ օրից առաջ։ Այդ հոգեւորականութեան և ազնուականութեան լիազօրների ժողովն էր և երրորդ գասակարգի, որի կազմի մէջ մտնում էին բոլոր նրանք, ով չէր պատկանում առաջին գասակարգերին։ Ազգային Համագումարը հրաւիրում էր ըստ բարեհայեցողու-

թեան թագաւորի, երբ նա գտնում էր պէտք-
ութիւն խորհրդակցելու կարևորագոյն գործերի
մասին: Լիազօրները վճռական ձայն չունէին:
Նրանք միայն խորհուրդ էին տալիս, իսկ թա-
գաւորը ազատ էր ընդունել կամ մերժել: Երբ
Փրանսիական թագաւորները յենուելով զօրքի
վրայ, զգում էին ոյժն իրենց կողմը, նրանք
շատ հազուազիւտ էր պատահում, որ խորհուրդ
հարցնէին թէ ինչպէս կառավարեն պետութիւնը:
Արդէն անցել էր 175 տարի այն օրից, երբ
վերջին անգամ հրաւիրուեցաւ Ազգային Համա-
գումարը: Այժմ արդէն հասել էր այն մօմէն-
տը, երբ Ազգային Համագումարի անհրաժեշ-
տութիւնը պահանջ էր դարձել բոլորի
կողմից: Այդ պահանջն՝ վերջին մօմէնտում,
միացաւ և հոգեորականութիւնը: 1789 թ. լոյս
տեսաւ թագաւորի հրամանը, որով հրաւիրում
էր Ազգային Համագումարը գարնան: Լիազօր-
ների թիւը որոշուած էր, 1214 մարդ: Երրորդ գա-
սակարգն ուղարկելու էր Ազգային Համագումա-
րին այնքան լիազօր, որքան տուածին երկու դա-
սակարգերը միասին ուղարկել էին:

Ընտրողները ընտրուածներին տուել էին
առանձին հրահանգներ, որոնց մէջ ձևակերպել
էին իրենց պահանջները և կարիքները: Այդ պա-
հանջները չափազանց տարբեր էին, բայց միայն

մի կէտի մէջ գալիս միանում էին պետական
նոր կարգեր կազմակերպելու անհրաժեշտութեան
մէջ:

Որոշուած էր Ազգային Համագումարի նիս-
տերը կազմել Վերսալում, Պարիզից ոչ ճեռու,
որպէս զի նա պաշտպանուած լինի մայրաքաղա-
քի ժողովրդի յուզուած մասսաների տրամա-
դրութիւնից: Մայիսի 5-ին 1789 թ. բացուեց
առաջին նիստը: Ազնուականների լիազօրները
ներկայացան ազգային տարագներով, սրերը
կողքներին, և փետուրով գլխարկները գլխներին,
հոգեորականները ամբողջապէս զգեստաւորուած,
իսկ երրորդ գասակարգի լիազօրները — հասարակ
սե տարագով: Ազնուականներին և հոգեորական-
ներին հանդիսաւոր կերպով առաջնորդեցին
գլխաւոր մուաքից ներս, իսկ երրորդ գասա-
կարգի լիազօրներին բաց թողին կողքի դոնից:
Նիստը բացւում է Լիւդովիկ XVL-ի գահական
ճառով: Գահական ճառից յեաոյ՝ առաջարկուում
է լիազօրներին ցրուել և նիստեր կազմել իւրա-
քանչիւր գասակարգ առանձին-առանձին: Այդ
ձեռնաու էր ազնուականներին և հոգեորական-
ներին, որոնց կողմն էր ինքը թագաւորը, բայց
ձեռնաու չէր բոլոր ժողովրդի համար, Երրորդ
գասակարգի լիազօրները, որոնք թուով երկու
անգամ աւելի էին, պահանջում էին միասին

Նիստեր ունենալ, ընդհանուր քուէարկութեամբ։ Այսպէս վիճեցին մի քանի շաբաթ։ Այդ ժամանակ երրորդ դասակարգի լիազօրների կողմը անցան շատ ծխական քահանաներ։ Համաձայն լիազօր Սիէսի առաջարկութեան՝ երրորդ դասակարգը իրեն յայտարարեց բոլոր ֆրանսիական ժողովրդի ներկայացուցիչ և անուանեց Ազգային Համաժողով։

Երբ այդ յայտարարուեցաւ, թագաւորը և արտօնեաները կատարելապէս շփոթուեցան մանաւանդ, երբ իմացան, որ հոգևորականների մեծ մասը միացել է Ազգային Համաժողովի հետ։ Նրանք որոշեցին խիստ միջոցներ ձեռք առնել։ Հրամայուած էր փակել դահլիճը, ուր նիստ ունէր Ազգային Համաժողովը, շրջապատել զօրքով և ոչ ոքի բաց չթողնել։ Ժողովրդի լիազօրները, գանելով ժողովի դռները փակուած՝ գնացին հեծելարանը (Manège) և այնտեղ կանգն ած՝ ընդհանուր ոգեսորութեամբ, ընդունեցին հետևեալ երդումը։ «Դուք երդում՝ էք շցրուել եւ հաւաքուել ամեն տեղ, ուր հանգամաննքները թոյլ կըտան, մինչեւ որ չի լինիլ մշակուած պետութեան սահմանադրութին եւ չի լինիլ նա հիմնաւրապէս վաւերացուած»։ Ի պատասխան դրան մի քանի հարիւր լիազօրներ՝ ձեռքերը վեր բարձրացրած՝ բացականչեցին՝ «Երդում՝ ենք»։ Հեծելարանը

շրջապատող ելէքտրականացած ամբոխը պատասխանեց՝ «Կեցցէ՛ Ազգային Համաժողովը»։ Թագաւորը մտածեց ընդառաջ գնալ և մի քանի զիջումներ անել, բայց թագուհին նրան այդ մտքից յետ պահեց։ Նա յունիսի 23-ին նշանակեց հանդիսաւոր նիստ։ Հաւաքուեցան բոլոր դասակարգերը, երրորդ դասակարգի լիազօրներին երկար պահեցին անձրևի տակ և միայն երկար և անընդհատ դուռը ծեծելուց յետոյ՝ ներս թողին կողքի դռնից։ Թագաւորը իր ճառում յանդիմանեց դասակարգային պայքարը և հաւատացնում էր, որ ժողովրդի բաղդաւորութեան վրայ նա միշտ մտածել է և միշտ հոգս է պատճառել իրեն և վերջում անբարտաւան կերպով յայտարարեց։ «Ես հրամայում եմ՝ ծեզ, պարոնայք, իսկոյն եւ եթ ցրուել եւ թող հիբաքանչիւրը ծեզնից վաղը գայ այն դահլիճը, որ նշանակուած է իւրաքանչիւր դասակարգի համար»։ Թագաւորը գնաց, նրա ետևից թողին ժողովի դահլիճը բարձրացաստիճան հոգևորականները ու աղնուականները, իսկ երրորդ դասակարգի լիազօրները, որոնք իրենց յայտարարել էին Ազգային Համաժողովը, մասցին լուռ և անշարժ իրենց տեղերում։ Լուռթիւնը ընդհատեց ականաւոր հուետոր Միքարօն, նա յայտարարեց իր որոտագին ձայնով, որ պէտք է վախենալ ըռնապետական շնորհնե-

ըից եւ յիշեցրեց հեծելարանում՝ տուած իրենց երդումը։ Այդ միջոցին ներս մտաւ թագաւորի սպասաւորը և հարցրեց. «Կուեցիք թագաւորի հրամանը», Միքայել հպարտութեամբ պատասխանեց. «Մենք այստեղ ժողովուել ենք ժողովրդի կամքով եւ այստեղից մեզ կարելի է հեռացնել միայն սուինների ոյժով՝ զնացէք յայտնեցէք այդ ծեր պարոնին»։

Սակայն ցըել ժողովրդի լիազօրներին սուինի ոյժով թագաւորը չհամարձակուեցաւ, որովհետեւ նրանց թիկունքում կանդնած էր երկիրը—ժողովուրդը։ Ազգային Համաժողովը յայտարարեց իր անդամների անձն անձեռնմխելի և որոշեց համարել պետական ոճագործ և ազգային դաւաճան նրան, ով էլ որ լինի նա,—ով կը խախտի այդ որոշումը։ Այժմ արդէն Ազգային Համաժողովը իրեն իրաւունք համարեց տալ Ֆրանսիային Սահմանադրութիւն եւ Ազգային Համաժողովը անուանուեց Սահմանադրութողով։

Այդ միջոցին թագաւորական պարագը պատրաստուում էր վճռական հարուած տալ Սահմանադրի ժողովին. Կառավարութիւնը քաշում էր զօրքերը դէպի Պարիզ և Վերսալ. Նրանք մեծ մասսամբ սահմանից դուրս փողով վարձուած գերմանացիներ և Շվեյցարիացիներ էին։ Մայրաքաղաքի շուրջը արդէն հաւաքուած էր 30 հազար

զինւոր և բացի գրանից քաղաքին մօտենում էր դարձեալ 20 հազար։

Հնչեց Պարիզում առաջին կոչը «ի զէն»։ Յուլիսի 13-ին վաղ առաւօտեան արուեցաւ նաշբատ՝ ամեն կողմից զանգահարութիւն, ամեն կողմից փողերի հնչիւն՝ ժողովուրդը հաւաքելու համար։ Ժողովուրդը նետուեց ամեն կողմ զէնք ձեռք բերելու համար։ Դատարկեցին զինանոցը և զինավաճառների բոլոր խանութները։ Որոշեցին կազմակերպել քաղաքային միլիցիա, որը կոչուեցաւ Ազգային Գվարդիա, բաղկացած 48 հազար մարդուց։ Սահմանադրի ժողովը յայտարարեց, որ իր պարագմունքները կը շարունակուին գիշեր և ցերեկ, առանց ընդհատումի և պահանջեց պետական զօրքի անմիջապէս հեռացումն։

Յուլիսի 14-ին նորից արուեցաւ նաբատ։ Ժողովուրդը երկան հանեց մի նկուղում 30 հազար պահուած հրացան, բազմաթիւ թրեր, նիշակներ և մի քանի թնդանութներ։ Ազգային Գվարդիայի հետ այժմ միացան Պարիզի արուաբանների զինուած բանւորութիւնը և փողոցներում շարունակ լուռում էր. «գէպի Բաստիլ», գէպի Բաստիլ»—դա ամբոց էր, և միենոյն ժամանակ պետական բանտը, որը արտասանելիս միայն սարսափ և սարսուռ էր ազդում։ Նա բաղկացած

էր 8 աշտարակներից 15 սաժէն բարձրութեամբ՝ միացած հաստ պատերով։ Զինուած ժողովուրդը պաշարեց Բաստիլլը։ Այստեղից պատասխանեցին թնդանօթների և հրացանների համազարկերով։ Յարձակուղների կողմից շատերը ընկան։ Կոխը Բաստիլի պատերի տակ շարունակուեցչորս ժամ։ Յանկարծ յայտնուեց Ազգային Գվարդիան թիւնդանօթներով, նա շարեց թնդանօթները դիրքերում ու բացեց կրակ, բերդից պատասխանում էին նոյնպէս կրակով, երեկոյեան ժամը 5-ին փողփողաց սպիտակ դրօշակը ի նշան այն բանի, որ նա անձնատուր է լինում։ Ընդհանուր խանդավառութեան մէջ ընկաւ թագաւորական արտօլիւտիզմի այդ ամրութիւնը, բայց տակաւին վաղաժամ էր տօնել յաղթանակը. քաղաքին մօտենում էին պետական գօրքերը. Որոշուած էր յուլիսի 15-ին գիշերը յարձակուել Պարիզի վրայ եօթը կէտերից, բոլորը պատրաստում էին ճակատամարտի. Քաղաքը նման էր մի պատերազմական բանակի, ուր ամեն վայրկեան լսում էին նաբառի ձայները. Ազգային Գվարդիան պատրաստ գէնքի տակ էր. Ամեն տեղ պատրաստում էին բարիգատներ, թագավորը, որին ամեն ինչ ներկայացրել էին կեղծ, վերջապէս մի դուքսից իմացաւ թէ ինչ է կատարում Պարիզում։ «Բայց չէ որ, այդ

ժողովրդական խլրտում է», բացականչեց Լիւդովիկ XVI-րդը. — Պէտք յեղափոխութիւն է»։ Թագաւորը վհատուեցաւ, կորցրեց իր բոլոր կորովը և հրամայեց անմիջապէս յետ նահանջել։ Հետեւալ օրը թագաւորը առանց իր շքախմբի գնաց Ազգային ժողովը, որը նրան զիմաւորեց սառը լսութեամբ։ Այդ առթիւ Միրաբօն նկատեց. «Ժողովրդների լուսութիւնը — զաս է թագաւորների համար»։ Յուզուած Լիւդովիկոս XVI-ը ասաց. «ուրեմն այսպէս, իմ ժողովրդի լիազօրներ, ես ձեզ հաւատում եմ և ինձ ձեզ եմ յանձնում»։

Բաստիլի գրաւման լուրը արձագանք տուեց գաւառներում զիւղացիների ապստամբութեան ընդդէմ կալուածատէրերի. Հասաւ գարեւոր ճնշումների վերջը. Ժողովը խիստ հաշիւ էր տեսնում իր երէկուայ ճնշողների հետ։ Ֆէօդալների դղեակները, վանքերը, ագարակները — բոլոր կրակի էին մատնուում։ Գօֆինէում միայն երկու շաբաթուայ ընթացքում այրուած էր 270 դղեակ։ Ազգային ժողովը ցանկանալով հանգատացնել ժողովրդին՝ իր գիշերուայ նիստում, 4-ին օգոստոսի 1789 թ. ոչնչացրեց Փէօդալների գարեւոր բոլոր իրաւունքները և արտօնութիւնները։ Հին կարգերին հաւատարիմ մնացած աղ-

նուականները հեռացան Ֆրանսիայից հարեան պետութիւնները և այնտեղ պատրաստւում էին վերականգնելու տապալուած կարգերը: Թագաւորը ու թագուհին արտաքուստ հաշտուելով Ազգային ֆողովի հետ, գաղտնի յոյս էին տածում օտարերկրեայ զօրքերի օգնութեամբ վերադարձնեյու կորուսած իշխանութիւնը:

Երկրին, ուր սարսափելի սովլ ահազին արհաւիրքներ էր պատճառել, այժմ աւելի վտանգ էր սպառնում արտաքին թշնամիների կողմից:

Պարիզում քաղցած բանսորների ամբոխը հաց էր պահանջում: Յուզմունքը ընդհանուր, համատարած էր: Կազմուում էին ընկերութիւններ, այսպէս ասած՝ կլուբներ, ուր կրակոտ, վառվուն հոեւսորները դիմում էին ուղղակի ժողովրդին: Առանձին հոչակ և ազգեցութիւն էր վայելում ժողովրդական մասսաների մէջ յակորեանների կլուբը (ծայրայեղ հասարակապետականների կլուբ): Թագաւորի և Վերսալի արքունիկի ջերմ կողմանիցները մեծ յոյս էին դրել օտարերկրեայ թագաւորների վրայ՝ Պրուսիայի և Աւստրիայի: Թագաւորի և Ազգային ֆողովի միջն մեծ բանակիւներ ծագեցին, որովհետեւ նա թագաւորը հրաժարուեց համատել Ազգային ֆողովի մի քանի որոշումները: Սովը նպաստում էր Պարիզի բնակչութեան

յուզուած տրամադրութեան, սուացուած տեղեկութիւններն այն մասին թէ յեղափոխութեան և ժողովրդի թշնամիների կողմից մեծ հրապարական ցոյց է տեղի ունեցել Վերսալի արքունիքում լցրեց համբերութեան բաժակը: Այնտեղ ազնուականները մերկացրած սրերով փորձնական գրոհ էին սարգել դահլիճի օթեակների վրայ, որպէս թէ իրենց առաջն էին Ազգային ֆողովի լիազօրների նստարանները: Յետոյ նուրից դրել էին իրենց սպիտակ կօկարանները, իսկ յեղափոխական նշանները ձգել էին ոտքերի տակ և կոխկուտել:

«Հաց, հաց» աղաղակների հետ միացաւ և Վերսալ գնալու պահանջը՝ թագաւորին Պարիզ բերելու, ուր նա պիտի մնար ժողովրդի հսկողութեան տակ:

Դեռահաս աղջկան մէկը՝ վերցրած թմբուկը՝ թմբկահարութեամբ ընդհանուր ճիշերի տակ՝ «դէսի Վերսալ», «դէսի Վերսալ» հսկայական ամբոխը շարժուեց առաջ: Դրանց հետ միացան զինուած մարդկանց և Ազգային Գվարդիայ խըմբերը: Նրանք կանգ առան այն շինութեան առաջ, ուր Ազգային ժողովի նիստն էր և պահանջեցին, որ իրենց առաջնորդեն թագաւորի մօտ: Թագաւորը զիջաւ ժողովրդական մասսաների յուզուած տրամադրութեան առաջ և Ազ-

գային Գվարդիայի ուղղեկցութեամբ, էր ընտառ
նիքով մեկնեց Պարիզ, Նրան ետևեց և Ազգա-
յին ժողովը: Անազան նա՝ թագաւորը մի ան-
յաջող փախչելու փորձ արաւ, արտասահման,
Ֆրանսիայի թշնամիների մօտ, բայց իմացուե-
ցաւ Վարէնօեայում և յետ բերուեցաւ Պարիզ:
Այս հանգամանքը ուժեղ տպաւորութիւն թողեց
Պարիզի վրայ:

Այդ միջոցին Ազգային, միենոյն ժամանակ
և Սահմանադիր ժողովը մշակել էր Սահմանա-
դրութիւնը, որին հաւատարիմ մնալու համար
Լիւզովիկ ԽVI-ը երդուեց: Պետութեան ձեր
որոշուած էր սահմանադրական միապետական:
Պետութեան զլուխը կանգնած էին Սահմանադիր
ժողովը և սահմանափակ իրաւունքներով թագա-
ւորը: Ֆրանսիայի սահմաններից դուրս լսում
էին սպառնալիքներ նոր պետական կարգերի
դէմ ազնուական—էմիգրանտների կողմից: Թա-
գաւորը հրաժարուեց հաստատել Սահմանադիր
ժողովի մի քանի որոշումները: Այդ որոշումների
մէջ էր, որոշուած ժամանակին չկերագարձող
էմիգրանտների ստացուածքի յարքունիս զրա-
ւումն և նրանց մահուան դատապարտելու որո-
շումն: Պարիզի արուարձանների գինուած բան-
տորների խմբերը, առաջնորդութեամբ յակորեան-
ների շարժուեցան դէպի Տիւլիէրի պալատը, ուր

բնակւում էր թագաւորը: Թագաւորին բռնեցին,
ոլիքին հազցըին մի կարմիր կօլպակ և ստիպե-
ցին խմել ժողովրդի կենացը: Այդ միջոցին վատ-
լուրեր ստացուեցան: Պրուսիացիք խուժել էին
Ֆրանսիայի սահմանները և նրանց հրամանա-
տարը հրատարակել էր մի լկտի մանիֆէստ,
որով սպառնում էր կործաննել Պարիզը և պատ-
ժել յեղափոխականներին մահուան պատժով:
Օգոստոսի 10-ին բանւորական խմբերը նո-
րից շարժուեցան թագաւորի պալատի վրայ:
Թագաւորը փախաւ ապաւինեց Սահմանադիր
ժողովին: Նրան զրկեցին իշխանութիւնից և տա-
րան բանտ:

Այսպէս ընկաւ միապետութիւնը Ֆրանսիա-
յում: Սեպտեմբեր ամսում 1792 թ. գումարուեց
Ազգային ժողովը և յայտարարեց Հասարակա-
վետութիւն:



ամերակաց միջազգային բարության վեհանդ
մերին և քարոզի պահանձնի մի մերժություններից
ու ապահով ուղարկելը կատարվել է միայն ներ
ու գլխավոր քառորդական պատշաճությունը ուղարկելը
ուղարկելը և առ աղքանակությունը պահանձնուելը
ուղարկելը կատարվել է առ մասնական պատշաճությունը
ուղարկելը և պահանձնուելը առ առաջական կայչությունը
ուղարկելը մասնական պատշաճությունը և առ
աղքանակությունը աղքանակությունը պահանձնուելը
ուղարկելը կատարվել է առ պահանձնուելը պատշաճությունը
ուղարկելը պահանձնուելը պատշաճությունը ուղարկելը
ուղարկելը պահանձնուելը պատշաճությունը և պահանձնուելը
ուղարկելը պահանձնուելը պատշաճությունը պահանձնուելը
ուղարկելը պահանձնուելը պատշաճությունը պահանձնուելը
ուղարկելը պահանձնուելը պատշաճությունը պահանձնուելը
ուղարկելը պահանձնուելը պատշաճությունը պահանձնուելը

Լոյս է տեսել՝

1. Ա. Աննենսկայեա.—Ի՞նչ է Հասարակապետութիւնը գինը 10 կոպ.
-

Պատրաստ են տպագրութեան համար՝

1. Ի. Մ. Ռօզով.—Ի՞նչ է Սահմանադիր Փողովը
2. Ի. Սիզով.—Ի՞նչ է Ազատութիւնը
3. Մակսիմով.—Ի՞նչ է Աշխատանքի Տօնը:
-

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.